

Պատրիարքարանին հետ սկսած բարեկամական յարարելութիւններն եղած են, բայց այս անհաւատալի կը թուի մեզ, վասն զի եղած յարաբերութիւններն՝ ըստ մեզ՝ առաւել քաղաւարական էին՝ քան թէ բարեկամական. և չենք կարծեր որ Հայոց Պատրիարքարանին հետ քաղաքավարութեամբ վարուիլն ալ յանցանք կամ հերետիկոսութիւն համարուած ըլլայ Գօլէճցոց քրիստոնէականին մէջ:

Ստոյգն այս է որ Հոյ Հռոմէական ժողովոցեան մեծ մասը գոհ էր Բարսեղ զերապայծառի տեղապահութենէն. այս պատճառաւ անոր յանկարծակի Հռոմ կանչուիլն և տեղը Կնիլիքի առաջնորդ Առաքելեան Յովսէփ Գերապայծառին Պաթողիկոսական տեղապահ դրուիլը սաստկապէս զրգոցեց ժողովուրդը. ուստի երբոր կիլիակի օրը եկեղեցիներուն մէջ Գեր. Հասունեանի կոնդակը կարդացուեցաւ, որուն մէջ շատ մը նղովքներու շարքէ ետե՛ւ՝ Բարսեղ Գերապայծառին Հռոմ կանչուիլն և Առաքելեան Գերապայծառին անոր տեղ դրուիլը կը ծառայուէր, Բերայի Ս. Ասկերերան եկեղեցոյն մէջ ժողովուրդն աղաղակ վերցուց, "չենք ձանձար, չենք ընդունիր, Հասունեանն ալ չենք ընդունիր, տեղապահն ալ, և այլն և այլն գոչելով: Շփոթութիւնը մեծցաւ, կանայք ճչել սկսան, պատարազի արարողութիւնը դադրեցաւ, և եկեղեցին պարպուեցաւ ու փոցուեցաւ: Օրթոգրիկ Լուսաւորիչ եկեղեցին ալ՝ ժողովուրդը կոնդակին ընթերցումը խափանեց: Լսածնուս նախով, Սամաթիոյ եկեղեցոյն մէջ ալ ժողովուրդը կանխաւ արգիլեր է կոնդակին ընթերցումը. և աղմուկ չէ կեր:

Ասիկէ զատ կոնդակին օրինակը քանի քանի անգամ եկեղեցեաց դռներուն վերայ կախուեր է, բայց ժողովուրդը վար աւեր պատուեր է:

Հիմա ալ կը լսենք թէ ժողովուրդը Ս. Պապին ուղղեալ նոր հանրագիր մը կ'ստորագրէ Գեր. Հասունեանի անկումը խնդրելու համար, և այս հանրագրութեան մասնակից են եղեր կղերականաց մէկ կարևոր մասն ալ:

Այս նոր բողոքը պիտի լսուի և առաջիններէն աւելի յաջող արգիլնք մը պիտի ունենայ, — չենք կարծեր: Պատճառը յաջորդ թուով:

Մասին թիւ 956:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԷՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԵՆՕԳԵ

19.Յ.Ն.Է. — Չօթառու զեղջ կարտալիս քահանայն Տէր Պետրոսեան՝ յազապս գաղտնի պատկազրութեանն առանց հրամանի Հոգ. Գործակալի, ըստ յայտարարութեան թեմական-Մտնին Արևանայ՝ վիցամսնոց ժամանակաւ արգիլեցաւ քահանայագործութիւնէ:

ՅՕ. — Ըստ խնդրանոց ժողովոցեան Արափայս զեղջ, նոյն զեղջ նորակառոյց Ծխական Գալոցի կառավարութեան և արգիլուսէս զարգացման համար, անդ գանուած Ս. Վարդանայ ուխտատեղւոյն սրբանոց մի քանորդը՝ յօգուտ Արևանայ թեմական Աստուծաբանին տալով, մնացեալը՝ ի նրպասս նոյն զեղջ նորակառոյց զպրոցի ժամանակաւ որսալէս տնօրինելոյ և թողլոյ համար՝ հրամանագրեցաւ թեմական-Մտնին Արևանայ, մինչև որ բարեպաշտ ժողովուրդը ուրիշ միջոցներով կարողանայ ապահովել նորա կառավարութիւնը ըստ իւր ժամանակին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ*

Առաջիկայ նիւթը միանգամայն հաւանալի անելու և ընթերցողին շիտթութիւններից և տարակուսութիւններից հեռու պահելու համար, աւելորդ

*) Այս յօդուածին մէջ արտարին զդատարանաց վերաբերեալ բոլոր բերած օրինակները մենք լրակել ենք թումնաւ Բ. Ըփոսմի նշանաւ որ գործից Տարեքը իմա-

չև՝ համարում նախ և առաջ բացատրել Ս-Վ-
ր-Ն-ի-ն բառի նշանակութիւնը, բայտ որում շա-
տերը սովորական խօսակցութեանց մէջ այս բառը
սխալմամբ են գործածում:

Մի որ և իցէ գործողութիւն, որ առաջին ան-
գամն է պատահում մեզ կատարել, պահանջում է
մեզանից մեծ ուշադրութիւն և մինչև անգամ հար-
կադրում է մեզ ստիպել և բռնաբարել մեր կամքը,
բայց յաճախ և յաճախ կրկնելով մի և նոյն գոր-
ծողութիւնը, հետզհետէ հեշտանում է նա մեզ հա-
մար, ուշադրութեան հարկաւորութիւնը աւելի և
աւելի պակասում, հետեւաբար և ստիպողութիւնը,
որով հարկադրում էինք մեր կամքը, առաւել և
առաւել թուլանում է: Այսպէս մենք մինչև այն
աստիճան կարող ենք ընտելանալ նոյն գործողու-
թեան և այնպէս արմատացնել նորան մեր բնու-
թեան մէջ, որ այնուհետև կրկատարենք նորան ա-
կամայ, անգիտակցաբար, այսինքն՝ նոյն իսկ բողոքե-
րում, երբ մեր ուշադրութիւնը դարձրած է լինում
միանգամայն ուրիշ գործի: Այս անսակ գործողու-
թիւններ են, գործիմանկ, այն մեր գործերը կամ
շարժմանքները, որոնք Վ-ր-Ն-ի-ն-ն է: Են կոչ-
վում և որոնց յազմելը երբեմն նշնպէս դժուար
է լինում մարդու համար, որպէս և բնածին հա-
կումների հակառակ վարուելը:

Սակայն հանաբազրեայ կեանքում Վ-ր-Ն-ի-ն
բառը գործ է ածվում խօսակցութեան մէջ անո-
րոշակի՝ միակերպ տրուելով հոգեկան զգացմանց
և ջիւղերի բազմատեսակ գործողութիւններին: Օրի-
նակ՝ շատ անգամ սովորութիւն են անուանում
մարդու՝ կազմուածքի այն յատկութիւնը, որով
նա ընտելացել է հիշտութեամբ տանել ցրտին, տա-
քութեանը, ցնցման, երերանքի, ցաւի, և այսպիսի
բաների դիմանալուն: Մենք կարող ենք բացատրել
այս նշանաւոր երևոյթը, բայց հաւանական է կար-

ցական փիլիսոփայութեան, որ ընդունուած է Ամերի-
կայի և Անգլիայի բարձրագոյն դպրոցներու մէջ իբրև
մեղմարկ Քարոյական փիլիսոփայութեան և որու
հայերէն ղեղեղիկ Քարգամանութիւնն էլ Ա. Ղաղարու
Պ. գործն է և ի լոյս է բնծայված Զմիւռնիայում
1834 թ. իսկ բոլոր յոգուածը մենք բաղի ենք Ռուս
դիմանական Ռեշիմալու: Գարդը իբրև առարկայ կըր-
թու Քեան, բարձրագոյն գործից: Ե. Ս.

ծել, որ այսպիսի զգացմունքները մի քանի անգամ
կրկնուելով, այնպիսի փոփոխութիւններ են պատ-
ճառում կազմուածքին, որ նա սակաւ առ սակաւ
ընդունակ է լինում անվնաս տանելու այն ազդե-
ցութիւններին, որոց չէր կարողանում առաջ դի-
մանալ և որոնք մինչև անգամ կարող էին վնաս-
ել նորան: Այսպէս սովորում են մարդիկ սակաւ
առ սակաւ բարեխառն օդի յանկարծակի փոփոխ-
վելուն, որ կարող էր առաջ հիւանդութիւն պատ-
ճառել նոցա: Պատահել է որ մարդիկ սովորել են
թոյն ընդունելու այնքան չափով, որ մահ պէտք է
պատճառէ անշուշտ անսովոր կազմուածքին: Թէ-
պէտ և մեծ կարեւորութիւն ունի մանկավարժու-
թեան մէջ կազմուածքի այսպիսի դիմացկոտու-
թեան խնդիրը, բայց մեր խօսքը առ այժմ ուրիշ
տեսակ սովորութիւնների մասին լինելով, անցար-
մար ենք համարում դորա մասին խօսել այս ան-
գամ: ուրեմն շարունակենք մեր խօսքը:

Ս-Վ-ր-Ն-ի-ն բառի ճիշդ և իսկական նշանակու-
թիւնը մենք այսպէս ենք ընդունում: Սովորու-
թիւնը ոչ պղ ինչ է: Եթէ ոչ կազմուածքի այն
կարողութիւնը կամ ընդունակութիւնը, որով նա
յաճախ և յաճախ կատարելով ու կրկնելով մի
և նոյն գործողութիւնները, հասնում է վարժու-
թեան և ընտելացման այն աստիճանին, որ վերջա-
պէս կատարում է նոյնը միանգամայն ակամայ և
անգիտակցաբար: Այսպէս ուրեմն Վ-ր-Ն-ի-ն
կամուտը և գիտակցաբար արած գործողութիւն-
ները՝ ի ձեռն անընդհատ վարժողութեան՝ ակա-
մայի և անգիտակցականների փոխարկելով, շինում է
կազմուածքի համար իբրև բնածին յատկութիւնը:
Յորանով ահա արդէն ինքն իրան հասկացվում է
այն մեծ և կարեւոր միտքը, թէ Սովորութեան ձեռ-
քով որքան էական փոփոխութիւններ կարելի է յա-
ռաջ բերել մարդու կազմուածքի մէջ, որոնք հա-
զորդէին և յատկացնէին նորան այնպիսի ընդու-
նակութիւնը, որպիսիք նա ամենեւին չէր ստացել
ընդունելից: Կազմուածքի այս յատկութեան վե-
րայ, որով նա ընդունակ է հանդիսանում յատ-
կացնել և աբնատացնել իւր մէջ նորանոր գործո-
ղութիւններ, և մի և նոյն ժամանակ արմատահան
անել հինները, ահա այս յատկութեան վերայ են
հիմնուած ոչ միայն բոլոր այն սովորութիւնները
և ընտելումները, որոնք հազորդվում են երև-

խալին դաստիարակութեան ձեռքով, այլ և այն սովորութիւնները և ընտելմանքները որոնք հաղորդուած են նորան նոյն իսկ կիանքից առանց մի որ և իցէ դիտաւորութեան և որոց հետ հարկադրուած է լինում շատ անգամ մաքառել գաստիարակիչը իսկ յետոյ ինքը մարդը կամ հասարակութիւնը:

Բայց սորանով չէ վերջանում սովորութեան նշանակութիւնը Սովորութիւնը ունի և մի ուրիշ՝ գուցէ և աւելի կարևոր՝ յատկութիւն, որը անուշադիր թողնելու և զանց առնելու չէ երբէք: Ասղմուածքը որ ստացել է այս կամ այն գործողութիւնը կատարելու սովորութիւն, այնուհետև ոչ թէ միայն առաւել հեշտութեամբ է կատարում նոյնը, այլ և երբեմն ստանում է մի ցանկութիւն, մի հակումն կատարելու նոյն գործողութիւնը: Այսպէս սկզբում մեզ հարկաւոր է լինում գործ դնել մեծ ուշադրութիւն և կամք, որ կարողանանք հաղորդել կազմուածքի այս կամ այն գործունէութեանը այս կամ նոյն ուղղութիւնը, իսկ յետոյ ստիպուած ենք լինում գործ ածել նոյնպէս սաստիկ ուշադրութիւն, դիտակցութիւն և կամք, որ կարողանանք ընդդիմանալ կազմուածքի հակումներին, զորս մենք ինքներս արմատացրինք նորա մէջ. սկզբում մենք ենք քարշում մեր կազմուածքը որ կողմ և կամքնք, իսկ յետոյ նա է քարշում մեզ այն կողմ, ուր գուցէ մենք լուրջօրին չէինք ցանկանում գնալ:

Այսպէս մենք տեսնում ենք, որ սովորութիւնները կարող են լինել երկու տեսակ. մէկ՝ այնպիսի սովորութիւններ, որ հակումներ չեն դարձած, և երկրորդ՝ միանգամայն հակումների փոխարկուած սովորութիւններ, որոնք ոչ միայն թնթակացնում են կազմուածքի համար գործողութիւններ կատարելը, այլ և յառաջ են բերում նոցա անընդհատ կատարելու ցանկութիւն: Առաջին տեսակ սովորութիւնները աւելի ուղիղ կը լինեն անուանել շնորհաւոր, որոց թուիցն են արհեստներին և արուեստանիցին վերաբերեալ բոլոր սովորութիւնները, իսկ երկրորդ տեսակի համար աւելի յարմար է Ստեղծականութիւնը պահանջել:

Արդի խօսքերից ծագում է մի հետաքրքրական և կարևոր հարց, թէ ի՞նչ պատճառով և ի՞նչ կերպով սովորութիւնները փոխարկուած են հակումների: Այս ինչպիսի կը բացատրվուի, եթէ ոչ

գործներ մարդկային հոգւոյ յետագայ յատկութեանը: Մեր հոգին պահանջում է անընդհատ գործունէութիւն և մի և նոյն ժամանակ փախչում է սրբիւքներից, ուրեմն նորա ցանկացած գործողութիւնը պէտք է թնթակ կատարելու լինի. ահա ի՞նչ պատճառով մեր կազմուածքի սովորած գործողութիւնը կատարելու նոյն իսկ թնթակութիւնը և հեշտութիւնը ակտիւ է մեր հոգւոյն, որով և հոգւոյ մէջ յառաջ է գալիս և պահանջում ու արմատացնում անընդհատ ցանկութիւն և հակումն դէպի նոյն գործողութիւնը, Քէպլետ և Ճյամբիտ է, որ մենք չենք զբիւրում այս բանի մէջ դիտակցութիւնից և կամքից, միշտ կարող ենք ընդդիմանալ կազմուածքի որպիսի և իցէ ուժեղ հակմանը դէպի մի որ և իցէ գործ, բայց բանն այն է, որ մինչդեռ մեր դիտակցութիւնը և կամքը ներգործում են վայրկենարար, միջահատուելով, կազմուածքը ազդում է մեզ վերայ անզաղար բոլոր իւր հակումներով և սովորութիւններով, և որովհետև հակումներին հետեւելը հեշտ և ակտիւ է մեզ համար, ապա ուրեմն և ընդդիմանալ նոցա նոյնքան ծանր և անակտիւ է, որքան զօրացած է մեր կազմուածքի մեզ հակառակ ուղղութիւնը: Ծիւնելուն սովոր մարդու համար զժուար չէ ամենևին չըծիւնել, որովհետև այդ մի անհրաժեշտ հարկաւորութիւն չէ և ոչ մի այնպիսի ակտիւութանք, որից ծանր լինէր հրաժարուել. բայց ծանր և անակտիւ է այն է, որ ամբողջ տարիներ ամեն մի ժամ, և համարեա թէ ամեն մի րոպէ հարկադրուած պէտք է լինինք արթուն պահել և ժամապահել պէս լարել մեր ուշադրութիւնը և կամքը այն սովորութեան վերայ, որ ամենայն րոպէ մղում է մեզ դէպի ծխախոտը:

Սովորութիւն ստանալու համար մեծ նշանակութիւն ունի և մարդու հասակը. քանի մատուց է կազմուածքը, այնքան շուտ է արմատացնում նա իւր մէջ սովորութիւններ: Մանուկը շուտ և հեշտութեամբ է սեփականացնում իրան մի որ և իցէ սովորութիւն, քան թէ ծերը: Նորածին երեխան, որ օրերով է աճում ու զարգանում, մի որ և իցէ բան երկու երեք անգամ կրկնելուց յետոյ, իսկոյն սովորում է այն, այնպէս որ՝ մայրերը, որոնք էտք էզուցի են ձգում սրբիւքնել երկխալին կանոնաւորապէս ծիծ ծծելուն, հարկադրուած են լինում մի քանի օրից յետոյ յաղթել արդէն

արմատացած մի քանի վատ սովորութիւններ, Շարժած խանձարուրը, այսպէս կամ այնպէս դրած բարձր երկու երեք անգամից յետոյ յատաջ են բերում երեխայի մէջ սովորութիւն, որոյ ընդդէմ գործելը աղաղակ է պաճառում երեխային: Ահա ինչ պատճառով անկարգ մօր զուակները լինում են և անհանգիստ, այն ինչ միշտ նախորոշած կերպով գործող մայրը ոչ մի ժամանակ չէ անհանգստանում երեխայի զուր աղաղակներով: Վարդուս ջրղեղը կարծես թէ ծարաւ են ընդհանուրներին, գուցէ և առաջին ընդհանուրները և սովորութիւնները արմատանում լինին առաջին անգամից իսկ. բայց քանի բազմանում են դրա մարդուս մէջ, այնքան դժուարութեամբ են արմատանում նորիցը ընդդիմադրութեան պատահելով հինների կողմից: Երեխան սովորում է կարճ միջոցում այնպէս խօսել օտար լեզուով, որպէս կարող չէր սովորել մեծահասակը մի քանի տարում: Իսկ եթէ ծերի սովորութիւնները անկի նշմարելի կերպով են արտայայտվում քան թէ երեխայինը, այս միայն նորանից է, որ ծերը շատ անգամ նոյնպէս յոգնում է լարած պահել իւր դիտակցութիւնը և կամքը, ինչպէս որ իւր մարմինը — ուղիղ դիրքում. այսպիսի ծերունին իւր սովորութիւններին այնպէս է տրվում, ինչպէս որ ձեռքը իւր տաք սրտով: Բայց մենք նոցա հետ համաձայն չենք, որոնք Բեկոնի պէս կարծում են, թէ երեխայական հասակում ստացած սովորութիւնները դժուարութեամբ են արմատահան լինում: Այս ճշմարիտ է եթէ միայն այն մտքով ընդունենք, թէ որքան հին է սովորութիւնը, այնքան հաստատ է նա, որովհետեւ արմատանում է կրկնողութիւնից իսկ: Բայց եթէ երեխան շուտով է սովորում՝ օրինակ՝ օտար լեզուն, ապա նոյնպէս և շուտով մոռանում է այն, եթէ դադարում է վարժվելուց: Միով բանիւ՝ սրբան դեռահասակ է մարդ, այնքան շուտով է արմատանում սովորութիւնը նորս մէջ և այնքան շուտով արմատահան լինում, և որքան հին են նոյն իսկ սովորութիւնները, այնքան եւ դժուար է արմատահան անել նոցա:

Ընդհանուրների և սովորութիւնների առարկեզը առանկ ընդարձակ է. քան թէ կարծում են սովորաբար: Նոյն իսկ ծնած օրից սկսած, երեխան զանազան փորձեր և յարմարողութիւններ է անում, որոնք յետոյ անգիտակցական սովորութիւններ և

ընդհանուրներ են դառնում նորս համար: Բնաստութիւնը արդէն ապացուցել է, որ տեսողական, լսողական, շոշափողական, միով բանիւ արտաքին զգացմունք կոչուած ընդունակութիւններից շատերը հասարակ, բնածին ընդունակութիւններից չեն ամենեւին, այլ բազմակողմանի եղբակացութիւններ, որ արել է մարդս իւր տղայական հասակում, և որոնք միանգամայն անհետացել են նորս յիշողութեան մէջ և դարձել իր և բնածին յատկութիւններ:

Ասածներս բացատրելու համար բաւական է մի երկու օրինակ առնել և մանրամասն քննել նրանց: Երեք կամ չորս տարեկան երեխան արդէն ունակութիւն ունի կանոնաւորապէս բռնել ձեռքը տուած առարկաները, այն ինչ նա առաջ բողբոջին չէր կարողանում այդ անել: Բայց եթէ մանրամասնաբար հետազօտելու լինինք այդ՝ ըստ երեւութիւն հասարակ գործողութիւնը, ապա տեսնելու ենք անշուշտ, որ երեխան՝ յատաջ քան թէ կարողանար իւր թափիկը պարզել և կանոնաւորապէս բռնել իրեն աուած առարկան, պէտք էր անշուշտ բազմաթիւ դիտողութիւններ, զանազան փորձառութիւններ, պէսպէս վերաբերութիւններ, դատողութիւններ և յարմարողութիւններ անել առաջ, և իրաւ որ դէպի առարկան թափիկը մեկնելու համար, երեխային պիտոյ էր՝ ա) սովորել սեփական ձեռքը՝ իւր ծանաչել, որովհետեւ ծնելիս նա դեռ ևս զուրկ է այսպիսի հմտութիւնից, այս ճանաչողութիւնը հարկաւոր է անշուշտ, որ նա կարողանայ անկասկած համոզուած լինել, թէ ձեռքը առարկային մօտեցնելիս ստացած շոշափողական տպաւորութիւնը զգում է նա իւր սեփական ձեռքի միջնորդութեամբ, որովհետեւ շոշափողական բոլոր տպաւորութիւնները զգացվում են իրօք ուղեղում, այլ ոչ թէ այն տեղում, ուր առարկան կպած է կաշուին. ընդ սմին և շոշափմանը այնպիսի արագութեամբ է հետեւում և նոյնը զգալը, որ մտաց ամենաարագ թռիչքը անգամ կարող չէ հաւասարել այդ վայրկեանների միջ եղած միջոցին: Սա մինչև այն աստիճան կարճատև և փոքր է, որ անհետաքրքիր է չարիկ նորան գէթ երեակակցական ամենանորս չարիով: Արեմն ինչպէս կարող է երեխան համոզուած լինել, թէ առարկան իւր սեպհական ձեռքումն է, եթէ նա դեռ ևս շատ և շատ ցիտողութիւններ փորձառութիւններ, և դատողութիւն-

ներ չէ արեղ, որոնցից սովորէր, թէ այն սուրա-
 ւորութիւնը որ զգում է նա բոլոր այսպիսի զիւ-
 րածներում, պէտք է միշտ վերաբերել այն հսկա-
 ւորութեան որ տեսնում են նորա աչերը. մատերի
 և առարկայի մէջ, կամ ուրիշ խօսքերով ուղեղի
 այսպիսի զգացումները և մատերի ու առարկայի
 մէջ տեսած հսկաւորութիւնը Դ համարել. իսկ որով-
 հետև այսպիսի զգացմունքները՝ նորա ներսումն են
 ծագում, նորա կազմուածքի սեպհականութիւնն
 են, ապա և վերջիչեալ սովորութիւնից, այն է
 շօշափողական զգացմունքը և նոյն իսկ շօշափողու-
 թիւնը միևնոյնն համարելուց իսկ, արդէն ինքն
 իրան յառաջ է գալիս այն փորձառական համոզ-
 մունքը, թէ իւր սեփական կազմուածքի մասն է
 այն թաթը, որով բռնած ունի առարկան, որից
 և զգում է յիշեալ սուրաւորութիւնը:

Ի՛նչև իրօք շօշափողական զգացմունքը և նոյն
 իսկ շօշափողութիւնը մի համարելը միանգամայն
 սխալ է, բայց մարդս ՚ի սկզբանէ ընկնում է և
 հաստատւում է այդ սխալանքի մէջ, և մինչև այն
 աստիճանի ընտելանում է նորան, որ ուրիշ կերպ
 ըմբոնել այդ զգացմունքը անկարելի է նորա հա-
 մար. նորան միշտ կը թուի, թէ շօշափողական
 սուրաւորութիւնը զգացվում է մատերում, այլ ոչ
 թէ ուղեղում, ինչպէս և այս պատահում է ուրիշ
 շատ զգացմունքների հետ: Սորա զեղեցիկ ապա-
 ցոյցը կարող է լինել նոյն փաստը, որ հանրածա-
 նօթ է բժշկական աշխարհում: Երբ որ կտրում
 են մարդու ձեռքը կամ ոտքը, նա գեռ ևս երկար
 շարունակում է զգալ, թէ ինչպէս ցաւում կամ
 քոր են գալի նորա մատերը, այն ինչ այդ զգաց-
 մունքը ծագում է իրօք նորա ուղեղում կտրած տե-
 ղի ջղերու գրգռողութիւնից:

Բայց դառնանք դէպի մեր քննելու հարցը.
 բացի վերջիչեալ սովորութեան, երկսան պէտք է
 ստաջ սովոր լինելը. բ.) զանազանել իւր մարմինը,
 ուրեմն և իւր ձեռքը բոլոր միւս առարկաներից,
 որովհետև ինչպէս նորա ձեռքը նոյնպէս ուրիշի
 ձեռքերը և բոլոր մարմինները միատեսակ սուրաւոր-
 վում են նորա աչերում: Այս սովորութեան ան-
 հրաժեշտ հարկաւորութիւնը ինքն իրան էլ ակներև
 է: Այս տեղ էլ նորան հարկաւոր են լինում բազ-
 մաթիւ փորձառութիւններ և դատողութիւններ,
 այդ ճանաչման մէջ հմտութիւն ստանալ ոչ հա-

մար. Հարկաւոր է նորան դարձնալ սովոր լինել. գ.)
 պարզել իւր ձեռքը որ կողմն և կամի. իսկ սորա
 համար պիտոյ է առաջինը, որ նորա ձեռքի միա-
 նունները այնպէս վարժուած լինին, որ դժուար
 չը լինի երեխային դարձնել իւր ձեռքը որ կողմն և
 կամի, և երկրորդ նա պէտք է հասկացողութիւն
 ունենայ զանազան կողմերու մասին, որից նա դար-
 ձնալ զուրկ է լինում ՚ի ծնէ, և թէ նա ՚ի ծնէ ու-
 նենար այդ ճանաչողութիւնը, ապա ինչո՞ւ սկզբ-
 րում չէ կարողանում նա իմանալ, թէ որ կող-
 միցն է լսվում մօր քաղցրիկ ձայնը և ինչո՞ւ մի
 քանի անյաջող փորձերից յետոյ է միայն կարողա-
 նում դարձնել իւր զուրկ այն կողմը, ուսկից լս-
 վում է ձայնը. ուրեմն երևակայեցէք թէ որքան
 փորձառութիւններ յարմարողութիւն և դատո-
 ղութիւններ է հարկաւոր երեխային անել մինչև որ
 կարողանայ սովորել դարձնել իւր թաթիկները զի-
 տակցաբար որ կողմն և կամի:

Հարկաւոր է նոյնպէս հասկացողութիւն և սո-
 վորութիւն ունենալ երեխային. դ.) չափել առար-
 կաների հեռաւորութիւնը կամ մօտաւորութիւնը,
 որ կարողանայ գիտակցաբար պարզել իւր ձեռքը
 դէպի նորան տուած առարկան: Այս հմտու-
 թիւնիցն էլ զուրկ է լինում նա սկզբում, ապա
 թէ ոչ ՚ի զուր չէր պարզել իւր թաթիկները դէպի
 լսյար նորան բռնելու դիտաւորութեամբ:

Աւրիշ էլի շատ ճարտարութիւններ և հմտու-
 թիւններ պէտք է ունենայ երեխան իւր ձեռքը դէպ
 ՚ի մի որ և իցէ առարկան միմիայն մեկնելու հա-
 մար. ես միայն նոցանից ամենապիտաւորները յի-
 շեցի: Բայց թէ տուած առարկան ինչպէս հարկն է
 բռնելու համար բաւական չէ, որ երեխան կարող
 լինի միմիայն պարզել իւր ձեռքերը, թէ և գիտակ-
 ցաբար դէպ ՚ի առարկան, այլ և ուրիշ հմտու-
 թիւններ էլ են հարկաւոր նորա համար, որոնցից
 ամենանշանաւորն այն է, որ երեխան պէտք է սո-
 վորած լինի. ե.) տեսնել ուղղակի առարկաների իս-
 կական հեռանկարը, այն ինչ ամեն մի առարկայ
 զծագրվում է մեր աչքում մէկ տափարակի
 վերայ. միմիայն լուսոյ և ստուերի միջնորդու-
 թիւնն առարկաների մեծութիւնն և փոքրութիւ-
 նը գիտնալը, հեռաւորութիւնը և մօտաւորութիւնը
 չափելը և վերջապէս զանազան մեծութիւն ունե-
 ցող մարմինները բազդատելու կարողութիւնն է:

որ տալիս է մեզ միջոց տեսնել ոչ թէ առարկայի տափարակ գծադիրը, այլ նորա հեռանկարը, նորա տարածութիւնը Իսկ եթէ երեխան կանոնաւորապէս է ձեռք տալի առարկային, ապա ուրեմն նա սովորել է արդէն իւր աչքում տպաւորված տափարակ գծադրով տեսնել ուղղակի առարկայի հեռանկարը, ուրեմն օրքան զհտողութիւններ, վերաբերութիւններ և դատողութիւններ պէտք է անել երեխան մինչև որ հասնէր այսպիսի ունակութեանս Էլ չեմ յիշում այն հմտութեան մասին, որ երեխան սովոր պէտք է լինէր փակել և բանալ իւր թաթիկը ինչպէս և կամի, որ կարողանար կանոնաւորապէս վեր առնել մի որ և իցէ առարկայ. մատերի այդ զանազան շարժումները, ինչպէս և ապացուցանում է բնախօսութիւնը, ամենադժուար գործողութիւններ են, որոց համար հարկաւոր է մեծ վարժութիւն մկանունների կողմից.

(Շ աբսոլուտ) :

ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻՒԲ

Զիւն է եկած, Հայ զիւղացիք, ձիւն սաստիկ
 Զեղքեր ծալած կ'նստէք դուք հանդարտիկ,
 Հոգ մի չունիք և պարագմունք չէք սիրեր,
 Ասէք. ձմեռն է եկեր :
 Այո՛, ձմեռ եկաւ կասէք և անխոյժ
 Իրարու տուն +է՞ անելու կերթաք շոյտ :
 Եւ սպանիչ ըմպելիքով կ'մոռնաք
 Զեր սուրբ նախնեաց յիշատակ,
 Եւ կամ ժողոված իրբե մէկ ազգ ինչ անձիր
 Տրտասառոյց ոտքով սրտով ի թոնիր,
 Բարբառն ծածկած մինչև կէս մէջք ամենուդ
 Եւ մնայլ քօղ մտքերուդ :
 Գուք մէկգմէկ հէ՛տե՛լ կ'խարէք
 Եւ կամ կուռով խաղաղ ժամերդ կանցնէք :
 Կմոռանաք որ ձեր որդիք ու ամուսին
 Քովերդ նստած կ'նային :
 Կմոռանաք որ այն ժամեր իրիկուան
 Զեղ մտաւոր օգուտ բերել միշտ կրնան,
 Եթէ ջանաք խորհուրդ ընել սերտ սրտով
 Բանալ զպրոց աշխուժով :
 Եւ որդիքներդ զրկել զպրոց որ սորվին,
 Թէ ի՞նչ կերպով Հայեր եկան ու անցին . . .

Ինչո՞ւ արդեօք այժմ մեր փառքն աղօտած
 Լեզուն և կրօնն է թուլցած,
 Ինչո՞ւ աղքատ և թշուառ ենք շատ տեղեր
 Գեղեցկաշուք քաղաքք դարձած են զիւղեր :
 Եւ առաջուան աներուն տեղ փառազարդ,
 Խրճիթ մնաց լոկ անզարդ :
 Խրճիթ մնաց պատսպարան շատերիս,
 Առանց ուսման դառն ապագայ ամենքիս :
 Մեր ժպիտը աւել դառն է արցունքէն
 Եւ այս կեանքը մահուանէն :
 Միթէ այն է կեանքը ուրախ զուարճալից,
 Ար իրարու երէք շեղանք կարեկից
 Եւ վաստակը զոր ըրած եմք յամառան
 Փճացրնեմք ի ձմրանս :
 Միթէ այն է կեանքը Հային որ չունին
 Աւսույլ մայրեր դատախարակ զաւակին,
 Միթէ այն է երջանկութիւն անվայել՝
 Քնել, ուտել ու խմել :
 Ախ, իմ եղբարք, իմ սիրելի զիւղացիք,
 Արօթն ու խոփ, եղ և արջառ շատ ունինք :
 Մեր առօրեայ հանդստութեան աչք տնկած՝
 Լպագայն եմք մոռացած :
 Զիւն է եկած, Հայ զիւղականք, ձիւն սաստիկ,
 Սառած են մեր թէ՛ աշխոյժը և թէ՛ միտք :
 Զիւն կ'հաղի՞ կրր արևը կ'ը ծագի,
 Եւ կեանք ուսմամբ կնորոգի :
 Ս. Սարգսիսեանց :

ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍՈՅ ՀԱՆԵԼՈՒԿԱՅ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՔԸ,
 Ա.
 Մարդը ունի իսկ երկու սոս,
 Արտիք-քայլէ և հետի սոս,
 Ինքն է աշխարհ ըստ իմաստնոյն
 Աւր և կամի, շրջի 'ւ երկչոտ :
 Բ.
 Այո՛ նոյնպէս մարդն է զա,
 Գլուխն 'ի վեր, անդամն 'ի վայր,
 Ար միշտ պտուղ յիւր սրտէն տայ :
 Իսկ մերթ բարի, երբեմն էլ չար :
 Յովհաննէս Մերկուսեանց :